

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2012թ. առաջին կիսամյակում իրականացված գործունեության վերաբերյալ

Տնօրեն՝ ԵՆՈՔ ԱԶԱՐՅԱՆ
2012-07-01



Սույն հաշվետվությունը լուսարանում է Ստանդարտների ազգային ինստիտուտի 2012թ. առաջին կիսամյակի գործունեությունը և նախատեսված է լայն հասարակական զանգվածների տեղեկացման համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6
2.1. Ինստիտուցիոնալ զարգացումներ.....	6
2.2. Այլ աշխատանքներ	7
3. Ստանդարտացում	11
4. Մարքետինգի և վաճառքի սպասարկում	14
5. Փորձարկման լաբորատորիաներ.....	15
6. Համապատասխանության հավաստում	16
7. Կառավարման համակարգերի սերտիֆիկացում	17
8. Ուսումնական կենտրոն.....	17

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ կողմից 2012թ. առաջին կիսամյակում իրականացված գործունեության վերաբերյալ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ինստիտուտ) Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ազգային մարմինն է: Ինստիտուտի գործունեությունն ընդգրկում է 4 հիմնական ոլորտներ՝ ստանդարտացման աշխատանքներ, համապատասխանության հավաստման, այդ թվում՝ պարենային և ոչ պարենային ապրանքների, հանրային սննդի ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքներ, լաբորատոր փորձարկումներ և ուսուցման կազմակերպում: Սույն հաշվետվությունն ընդգրկում է նշված ոլորտներում Ինստիտուտի կողմից 2012թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեությունը, Ինստիտուտի ինստիտուցիոնալ կառուցվածքի վերափոխումները և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը:

Սակայն նախքան բուն հաշվետվության անցնելը ստորև ներկայացվում են Ինստիտուտի գործունեության վերաբերյալ որոշ հակիրճ տեղեկություններ:

SARM-ը թվերով

Ստանդարտացման ազգային (հայելային) տեխնիկական հանձնաժողովները (ՏՀ)	- 21 ՏՀ-ներ, որոնց կազմում ընդգրկված են ավելի քան՝ 400 փորձագետ 250 շահագրգիռ կազմակերպություններ (պետական մարմիններ, մասնավոր և հասարակական կազմակերպություններ, այլ) 100 ՏՀ և ԱԽ նիստ և քննարկում՝ տարեկան - Ազգային ՏՀ-ները հանդիսանում են հայելային ՏՀ-ներ՝ 20 ԻՍՕ ՏՀ-ների (լիիրավ) 20 ԻՍՕ ՏՀ-ների (դիտորդ) 3 ՍԵՆ ՏՀ-ների մասնակից 51 ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ ՏՀ-ների (լիիրավ, որից՝ 2 ՏՀ քարտուղարություն) 28 ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ ՏՀ-ների (դիտորդ)
Բաժանորդներ	50 կազմակերպություն, մշտական խորհրդատվություն՝ ոլորտային ստանդարտների վերաբերյալ
ՀՀ ստանդարտների մշակումը 2012 թվականի 1-ին կիսամյակ	Ազգային գործող ստանդարտներ՝ Զուտ ազգային (ՀՍ)՝ 3 հատ Միջազգայինից փոխակերպված՝ 27, Եվրոպականից և այլ երկրներից փոխակերպված՝ 5, Միջպետական ստանդարտներ՝ 0,
	Ընդամենը՝ 35 հատ

Ընդհանուր 1993-2012թթ ընթացքում	Ազգային գործող ստանդարտներ՝ - Ձուտ ազգային (<US)՝ 316 հատ - Միջազգայինից փոխակերպված՝ 325 - Միջպետական ստանդարտներ՝ ԳՕՍՍ 2443 - Եվրոպականից և այլ երկրներից փոխակերպված՝ 93 - ՌԴ ազգային ստանդարտներ (ԳՕՍՍ Ռ)՝ 410 հատ, Ընդամենը՝ 3587 ազգային ստանդարտ
Համագործակցություն	ՍԱՐՄ-ը անդամակցում է՝ ԻՍՕ -ին 1997թ.-ից (լիիրավ) ՍԵՆ -ին 2007թ.-ից գործընկեր, իսկ 2008 թ.-ից միացող անդամ ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ ստանդարտացման բյուրոին 1992թ.-ից ՄԷԿ-ին՝ 2004թ.-ից գործընկերության ծրագրի մասնակից
Տեխնիկական ինֆորմացիայի էլեկտրոնային հասանելիությունը	Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ ստանդարտացման գործունեության ողջ ինֆորմացիան հասանելի է առցանց www.sarm.am հասցեով: Օգտվողները այստեղ կարող են գտնել. <ul style="list-style-type: none"> • ստանդարտների կիրառման վերաբերյալ տվյալներ • ստանդարտների նախագծեր

Ստանդարտներն ըստ տեխնիկական ոլորտների

Ոլորտներն ըստ ICS դասակարգման		ՀՀ ստանդարտներ 1993-2012թթ.	
		քանակ	%
1.	Ընդհանուր դրույթներ (տերմինաբանություն), ենթակառուցվածքներ և գիտություններ	435	12.11
2.	Առողջապահություն, անվտանգություն և շրջակա միջավայր	406	11.3
3.	Ճարտարապետական տեխնոլոգիաներ	696	19.37
4.	Էլեկտրոնիկա, ինֆորմացիոն տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն	188	5.23
5.	Տրանսպորտ և ապրանքների բաշխում	160	4.45
6.	Գյուղատնտեսություն և սննդամթերքի տեխնոլոգիա	486	13.53
7.	Նյութագիտություն	741	20.62
8.	Շինարարություն	338	9.4
9.	Հատուկ տեխնոլոգիաներ	142	3.95
Ընդամենը		3592	100

Դասակարգված ոլորտների նկարագրությունը

1. Ընդհանուր դրույթներ, ենթակառուցվածքներ և գիտություններ. Ընդհանուր դրույթներ. Տերմինաբանություն. Ստանդարտացում. Փաստաթղթեր (01), Սոցիոլոգիա. Ծառայություններ. Ֆիրմաների կազմակերպում և ղեկավարում. Վարչակազմ. Տրանսպորտ (03), Մաթեմատիկա. Բնական գիտություններ (07)

2. **Առողջապահություն, անվտանգություն և շրջակա միջավայր.** Առողջապահություն (11), Շրջակա միջավայրի պահպանություն. Մարդու պաշտպանություն շրջակա միջավայրի ներգործությունից. Անվտանգություն (13)

3. **Ճարտարագիտական տեխնոլոգիաներ.** Չափագիտություն և չափումներ. Ֆիզիկական երևույթներ (17), Փորձարկումներ (19), Ընդհանուր նշանակման մեխանիկական համակարգեր և սարքավորանք (21), Ընդհանուր նշանակման հիդրավլիկական և օդաճնշական համակարգեր և բաղկացուցիչ մասեր (23), Մեքենաշինություն (25), Էներգետիկա և ջերմատեխնիկա (27), Էլեկտրատեխնիկա (29), Ճշգրիտ մեխանիկա. Ոսկերչություն (39)

4. **Էլեկտրոնիկա, ինֆորմացիոն տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն.** Էլեկտրոնիկա (31), Հեռահաղորդակցություն. Լսատեխնիկա և տեսատեխնիկա (33), Տեղեկատվական տեխնոլոգիաներ. Գրասենյակային մեքենաներ (35), Պատկերներ ստանալու տեխնոլոգիա (37)

5. **Տրանսպորտ և ապրանքների բաշխում.** Ճանապարհատրանսպորտային տեխնիկա (43), Երկաթուղային տեխնիկա (45), Նավաշինություն և ծովային կառույցներ (47), Օդագնացային և տիեզերագնացային տեխնիկա (49), Բեռնման և բեռնաթափման սարքավորանք (53), Բեռների փաթեթավորում և տեղաբաշխում (55)

6. **Գյուղատնտեսություն և սննդամթերքի տեխնոլոգիա.** Գյուղատնտեսություն (65), Սննդամթերքի տեխնոլոգիա (67)

7. **Նյութագիտություն.** Մանածագործական և կաշեգործական արտադրության տեխնոլոգիա (59), Կարի արդյունաբերություն (61), Քիմիական տեխնոլոգիա (71), Հանքագործություն և օգտակար հանածոներ (73), Նավթարդյունահանման և նավթամշակման տեխնոլոգիա և հարակից տեխնոլոգիաներ (75), Մետաղագործություն (77), Փայտամշակման տեխնոլոգիա (79), Ապակեգործական և խեցեգործական արդյունաբերություն (81), ռետինի և պլաստմասսայի արդյունաբերություն (83), Թղթի տեխնոլոգիա (85), Լաքաներկային արդյունաբերություն (87)

8. **Շինարարություն.** Շինանյութեր և շինարարություն (91) , Քաղաքացիական շինարարություն (93)

9. **Հատուկ տեխնոլոգիաներ.** Ռազմական տեխնիկա (95), Կենցաղային տեխնիկա և առեվտրի սարքավորանք. Հանգիստ. Սպորտ (97)

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կառուցվածքը և հաստիքացուցակը ենթարկվեցին զգալի փոփոխությունների, որոնք ուղղված էին ընկերության գործունեության արդյունավետության բարձրացմանը, անհարկի հաստիքների և աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերի կրճատմանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2012 թվականի մարտի 4-ի թիվ 315-Ա հրամանով հաստատվեց Ինստիտուտի նոր կառուցվածքը և հաստիքացուցակը: Նոր կառուցվածքի և հաստիքացուցակի սահմանումը պայմանավորված էր կանխատեսվող եկամուտներին և ծախսերի նախահաշվին ընկերության կառուցվածքի համապատասխանեցման անհրաժեշտությամբ: Միաժամանակ, հիմնվելով ընկերության գործունեության փաստացի արդյունքների վրա, նշված հրամանով սահմանվեց նաև 2012թ. եկամուտների կանխատեսումը և ծախսերի նախահաշիվը:

Նոր հաստիքացուցակով նախատեսվում է 109 հաստիք՝ նախկին 112 հաստիքի փոխարեն, ինչը պայմանավորված է հանրային սննդի ծառայությունների սերտիֆիկացման աշխատանքների ծավալի կտրուկ կրճատմամբ, ինչպես նաև ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N769-Ն որոշմամբ համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի և ծառայությունների ցանկի վերացմամբ: Միաժամանակ, հաստիքների համար նախատեսված աշխատավարձի դրույքաչափերը մասնակիորեն ենթարկվել են փոփոխության՝ միայն ղեկավար պաշտոնների մասով:

Ըստ էության, նոր կառուցվածքում և հաստիքացուցակում տեղ են գտել հետևյալ փոփոխությունները՝

Ինստիտուտի նախատեսված նոր կառուցվածքը հիմնված է 2012թ. մարտի 24-ին ուժի մեջ մտած «Ստանդարտացման մասին» նոր օրենքի նախագծի պահանջների վրա: Մասնավորապես, Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ կառուցվածքից հանվել է Գիտական խորհուրդը, որը նախկինում տնօրենի ենթակայության տակ գործող խորհրդատվական բնույթի մարմին էր: Փոխարենը, կառուցվածքով ամրագրվում է Կառավարման խորհուրդը, որն Ինստիտուտի բարձրագույն ղեկավարման մարմինն է և որի կազմը հաստատվելու է ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանով: Կառավարման խորհրդի իրավասությունները սահմանվում են «Ստանդարտացման մասին» ՀՀ նոր օրենքով:

Ստեղծվել է Մարքետինգի և վաճառքների նոր բաժին, որի գլխավոր խնդիրն է լինելու խթանել ու զարգացնել բաժանորդային սպասարկման ծառայություններն ու ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի վաճառքը: Նախկին տարիների, ինչպես նաև այլ երկրների ստանդարտների ինստիտուտների փորձը վկայում է, որ այդպիսի առանձին ստորաբաժանման առկայության դեպքում զգալիորեն բարելավվում է բաժանորդային սպասարկման որակը: Բաժինը պետք է մշակի մարքետինգային ռազմավարություն և հետամուտ լինի վաճառքների մակարդակի բարձրացմանը:

Ստանդարտացման բաժնում կրճատվել է 2, իսկ Լաբորատոր փորձարկումների կենտրոնում՝ 3 հաստիք:

Բոլոր սերտիֆիկացման բաժիններում գլխավոր, առաջատար և առաջին կարգի մասնագետի հաստիքները փոխարինվել են «փորձագետի» հաստիքով:

Նախկին Անձնակազմի և ենթակառուցվածքների սպասարկման բաժինը վերակազմավորվել է երկու առանձին բաժինների՝ քարտուղարության և վարչակազմակերպչական բաժինների, ինչը պայմանավորված է գործառույթային մեծ տարբերություններով ու աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձրացմամբ: Մասնավորապես, քարտուղարության գործառույթները վերաբերում են փաստաթղթաշրջանառության և կադրերի գործերի կազմակերպմանը, իսկ վարչակազմակերպչական բաժինը զբաղվում է ընդհանուր տնտեսական բնույթի աշխատանքների կազմակերպմամբ:

Կառուցվածքային և հաստիքային փոփոխությունների շնորհիվ աշխատավարձի ֆոնդը կրճատվել է շուրջ 15%-ով:

2.2. ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Մասնակցություն ԻՍՕ Խորհրդի աշխատանքներին

Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ե.Ազարյանը 2012թ. հունվարի 12-13 մասնակցել է ԻՍՕ-ի Խորհրդի ռազմավարական հարցերով մշտական հանձնաժողովի 32-րդ նիստի աշխատանքներին, որի ընթացքում քննարկվել են ԻՍՕ-ի 2011-2015թթ. ռազմավարական պլանի 2012թ. հիմնական կատարողական չափորոշիչները, ԻՍՕ համակարգի ռիսկերի կառավարումը և վերլուծությունը, ստանդարտներից ստացվող օգուտների գնահատման մեթոդաբանության ու հետազոտությունների հետագա ընդլայնման հնարավորությունները, այլ կազմակերպությունների հետ ԻՍՕ-ի համագործակցության արդյունավետության գնահատման չափանիշների սահմանումը, նոր ոլորտներում ստանդարտացման աշխատանքների ծավալման նախաձեռնությունները, ԻՍՕ-ի գործարար մոդելի կայունության դիտարկումը և այլ հարցեր:

Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ե.Ազարյանը 2012թ. մարտի 15-16 ք.Ժնևում մասնակցել է ԻՍՕ-ի Խորհրդի հերթական 91-րդ նիստի աշխատանքներին:

Պարոն Ազարյանը, Խորհրդի նիստերից դուրս աշխատանքային հանդիպումներ է ունեցել ԻՍՕ-ի նախագահ պարոն Բ.Ալյոշինի և ԻՍՕ-ի գլխավոր քարտուղար պարոն Ռոբ Սթիլի հետ, որոնց ընթացքում քննարկվել է Ստանդարտների ազգային ինստիտուտի հետ համագործակցության հեռանկարները՝ ԱՊՀ և միջազգային շրջանակներում: Ստանդարտների ազգային ինստիտուտի հրավերքի համաձայն պայմանավորվածություն է ձեռք բերվել ԻՍՕ-ի նախագահի Հայաստան այցի վերաբերյալ:

2. Վերապարասում

2012թ.-ի մարտի 13-14 ստանդարտների ազգային ինստիտուտի մեկ աշխատակից մասնակցել է Ռուսաստանի Դաշնությանում Տեխնիկական կանոնակարգման և չափադիտության դաշնային գործակալության կողմից ԱՊՀ ստանդարտացման ազգային մարմինների և ԱՊՀ ՍՉՍ Միջպետական խորհրդի (ՄՊԽ) բյուրոյի մասնագետների համար կազմակերպված «Ստանդարտների գործնական աշխատանքի ավտոմատացված տեղեկատվական համակարգի տարբերակ 3.0-2011» դասընթացին:

3. ԻՍՕ նախագահի այցը և Ստանդարտացման բնագավառի միանգամյա բացառիկ մրցանակաբաշխությանը

2012 թվականի ապրիլի 18-19 պաշտոնական այցով առաջին անգամ Հայաստանում էին գտնվում ԻՍՕ նախագահ Բ.Այոշինը և ՌԴ Տեխնիկական կանոնակարգման ու չափագիտության դաշնային գործակալության պետ Գ.Էլկինը: Այցի նպատակն էր շեշտադրել ստանդարտացման կարևորությունը երկրի տնտեսական զարգացման գործընթացում, ինչպես նաև ընդգծել վերջին տարիներին Հայաստանի կողմից ձեռք բերված հաջողությունները միջազգային ստանդարտացման ասպարեզում:

Ապրիլի 18-ին պատվիրակությանն ընդունեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Սարգսյանը: «Ի դեմս ձեզ ստանդարտացման համակարգի ներդրման և կիրառման աշխատանքներում մենք ունենք լավ գործընկեր: Ուրախ ենք, որ մեր համագործակցությունը նպաստում է նաև Հայաստանի և Ռուսաստանի միջև հարաբերությունների ամրապնդմանը», - կառավարության հասարակայնության հետ կապերի վարչության հաղորդմամբ, ասել է Տիգրան Սարգսյանը:

Վարչապետը գոհունակություն է հայտնել Ստանդարտացման միջազգային կազմակերպության հետ համագործակցությունից և շնորհակալություն հայտնել Բորիս Այոշինին՝ ստանդարտացման համակարգի կիրառման աշխատանքներում Հայաստանին ցուցաբերած օժանդակության համար:

Վարչապետը և Ստանդարտացման միջազգային կազմակերպության նախագահը քննարկել են երկկողմ հետագա համագործակցությանը, ստանդարտացման համակարգի կիրառման նպատակով իրականացվող բարեփոխումներին, ազգային ստանդարտների՝ միջազգային չափանիշներին ներդաշնակեցմանը վերաբերող հարցեր:

Նույն օրը ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանն ընդունեց պատվիրակությունը: Հանդիպման ընթացքում զրուցակիցները անդրադարձան Հայաստանում ստանդարտացման բնագավառում իրականացվող գործընթացների ներդաշնակեցմանը միջազգային (ԻՍՕ), եվրոպական (ԵՆ) և միջատական (ԳՕՍՏ) ստանդարտներին, քննարկեցին ստանդարտացման ծրագրերում սահմանված ազգային գերակայությունները, միջազգային ու տարածաշրջանային ստանդարտացման գործընթացում Հայաստանի ակտիվ մասնակցության հնարավորությունները:

Հանդիպման օրակարգում էր նաև Հայաստանի գործարար միջավայրի համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու և արտահանումը խթանելու նպատակով տեխնիկական խոչընդոտների վերացմանն ուղղված հարցերի քննարկումը:

Պաշտոնական հանդիպումներից հետո Բ.Այոշինը և Գ.Էլկինը այցելեցին Ստանդարտների ազգային ինստիտուտ, որտեղ նրանց ներկայացվեց Ինստիտուտի կողմից ստանդարտացման ոլորտում վերջին տարիներին իրականացված աշխատանքը: Բ.Այոշինը գոհունակություն հայտնեց Ինստիտուտի զարգացվածության մակարդակից և նշեց, որ ԻՍՕ-ն հետագայում ևս հետևողականորեն աջակցելու է զարգացող երկրներում ստանդարտացման զարգացմանը:

Ապրիլի 19-ին ԻՍՕ նախագահ Բ.Այոշինն այցելեց Երևանի պետական համալսարան, որտեղ համալսարանի Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների համար «Ստանդարտացման կարևորությունը տնտեսական զարգացման համար» թեմայով դասախոսություն կարդաց: Դասախոսությունը մեծ հետաքրքրություն առաջացրեց

ուսանողների ու դասախոսների շրջանում: Իսկ դասախոսության վերջում պարոն Այոշինը սիրով պատասխանեց հարցերին:

Այնուհետև, պատվիրակությունը այցելեց Ծիծեռնակաբերդի ցեղասպանության թանգարան և հուշահամալիր, որտեղ հարգանքի տուրք մատուցվեց Մեծ Եղերնի զոհերի հիշատակին:

Ապրիլի 19-ի օրվա երկրորդ կեսին պատվիրակությունը մասնակցեց Ստանդարտների ազգային ինստիտուտի նախաձեռնությամբ կազմակերպված Ստանդարտացման բնագավառի միանգամյա բացառիկ մրցանակաբաշխությանը:

Ստանդարտացման բնագավառում ցուցաբերած ակտիվ մասնակցության և ստանդարտների գործնականում արդյունավետ կիրառման համար Հայաստանյան 20 կազմակերպություններ արժանացան բարձրագույն և ոսկյա մրցանակների: Մրցանակները շնորհվեցին ԻՍՕ նախագահ Բ.Այոշինի, ՌԴ Տեխնիկական կանոնակարգման ու չափազիտության դաշնային գործակալության պետ Գ.Էլկինի, ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանի և Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ե.Ազարյանի կողմից:

Մրցանակաբաշխության համար սահմանվել էր երկու կարգի մրցանակ: «Ոսկյա մրցանակը» շնորհվեց այն 10 կազմակերպություններին, որոնք առավել մեծ չափով են կիրառում ստանդարտացման փաստաթղթերը: Դրանք են՝ Երևանի կոնյակի գործարանը («Արարատ» ապրանքանիշ), «Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ»-ը, «Ջերմուկ գրուվը», «ՌԴԴ» հանքային ջրերի գործարանը, «Գյումրի-Գարեջուր»-ը, շինարարական «Ֆիլիշին» ընկերությունը, «Դուստր Մարիաննա» կաթնամթերք արտադրողը, նավթամթերք ներմուծող «Ֆլեշը», «Արարատ ցեմենտը», «Բարի Սամարացին» (մսամթերք):

«Բարձրագույն մրցանակը» շնորհվեց ստանդարտացման գործընթացներում ակտիվ դերակատարում ունեցող 10 հեղինակավոր հայկական կազմակերպությունների: Դրանք են՝ «Չանախ» (կաթնամթերքի արտադրություն), «Արզնի տոհմային թռչնաֆաբրիկա», «Բեկոն պրոդուկտ» (մսամթերք), «Պոստ Լեքս Քոնսալթինգ» (հակակարկտային կայաններ), «Հայասի գրուվ» (սննդամթերք), «Ին մուլդ» (պլաստմասայե տարաներ), «Ջրվեժի մսամթերքի կոմբինատ», «Փ.Աբաջյան» (շինարարական նյութերի հավաստում և փորձարկում), «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Ռոյալ Արմենիա» (սուրճ):

Բ. Այոշինն իր ողջույնի խոսքում նշեց, որ այսօր հանրությունը կանգնած է ընտրության առաջ, ստեղծվում են հիբրիդային շարժիչներ, ռեսուրսներն այլ կերպ են օգտագործվում, բարձր տեխնոլոգիաները նոր հնարավորություններ են ընձեռում. «Ներկա մարտահրավերները պետք է հաղթահարել և դա պետք է անել ստանդարտացման միջոցով»:

Ըստ պարոն Այոշինի, ընթացող գլոբալիզացման պայմաններում ստանդարտների դերը գնալով ավելի ու ավելի է աճում, և միջազգային ստանդարտների մշակման գործում մեծանում է զարգացող երկրների, այդ թվում՝ Հայաստանի դերը:

4. Եվրոպական ստանդարտացման կոմիտեի (ՍԵՆ) վեհաժողովը

Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ե.Ազարյանը 2012թ. հունիսի 6-7 Բուլղարիայի Ալբենա քաղաքում մասնակցել է Եվրոպական ստանդարտացման կոմիտեի (ՍԵՆ) 38-րդ տարեկան վեհաժողովի և Եվրոպական Ստանդարտացման Խորհրդաժողովի աշխատանքներին: Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ե.Ազարյանը մի շարք հանդիպումներ է ունեցել ԻՍՕ նախագահ Բ.Այոշինի, ՍԵՆ նախագահ Ֆ.Սմաքսվիլի, ՍԵՆ-

ՍԵՆԵԼԵԿ տնօրեն Հ.Սանտիագոյի և մի շարք երկրների պատվիրակությունների հետ, որոնց ընթացքում քննարկվել են համագործակցության հիմնախնդիրները:

5. Տեխնիկական կանոնակարգման և ստանդարտացման վերաբերյալ Եվրահանձնաժողովի կողմից կազմակերպված 6-րդ Առևտրային Խորհրդաժողովը

ՀՀ էկոնոմիկայի նախարարության պատվիրակությունը, որի կազմում ընդգրկված էին նախարարության որակի ենթակառուցվածքի վարչության պետ Լ.Մաքսուդյանը, Եվրամիության հետ համագործակցության վարչության պետ Ա.Մայսուրյանը, Շուկայի վերահսկողության պետական տեսչության պետ Լ.Խալիկյանը և Ստանդարտների ազգային ինստիտուտի փոխտնօրեն Գ.Նազարյանը, Եվրոպական Հանձնաժողովի հրավերքով 2012թ. հունիսի 27-29 մասնակցեց Սթրասբուրգում կազմակերպված «Տեխնիկական կանոնակարգման և ստանդարտացման վերաբերյալ» 6-րդ Առևտրային Խորհրդաժողովին (Trade Panel). Այդ Խորհրդաժողովին մասնակցում էին նաև Վրաստանի, Ադրբեջանի, Բելարուսի, Ուկրաինայի և Մոլդովայի պատվիրակությունները:

Հայաստանի պատվիրակությունից զեկույցով հանդես եկավ որակի ենթակառուցվածքի վարչության պետ տիկին Լ.Մաքսուդյանը, ով մանրամասն ներկայացրեց վերջին օրենսդրական բարեփոխումները, տեխնիկական կանոնակարգման ոլորտի խնդիրները և ձեռնարկված միջոցառումներ, ստանդարտացման արդի վիճակը և զարգացման հեռանկարները:

Ընդհանուր առմամբ, Խորհրդաժողովն ընթացավ բարիդրացիական աշխատանքային մթնոլորտում և շատ օգտակար էր այլ երկրներում տեղի ունեցող գործընթացների և զարգացման ընկալման, ինչպես նաև մասնագիտական քննարկումների առումով: Մասնավորապես, Ստանդարտների ազգային ինստիտուտի փոխտնօրեն Գ.Նազարյանը առանձնակի քննարկումներ ունեցավ Բելառուսի ստանդարտացման ինստիտուտի տնօրեն Վ.Հուրևիչի և Ուկրաինայի նախագահի ստանդարտացման ու տեխնիկական կանոնակարգման գծով Խորհրդական Լ.Վիտկինի հետ, որոնք օգտակար էին բարեփոխումների հետ կապված փորձի փոխանակման համար:

3. ՄՏԱՆԴԱՐՏԱՑՈՒՄ

Առաջին կիսամյակում հաստատվել է «Ստանդարտների մշակման ծառայությունների 2012 թվականի ծրագիրը և ստանդարտացման մասին 2012 թվականի աշխատանքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 19-ի N 504-Ն որոշումը և դրա հիման վրա 2012 թվականի հունիսի 25-ին ՀՀ էկոնոմիկային նախարարության և Ստանդարտների ազգային ինստիտուտի միջև կնքվել է N89-12 պայմանագիրը՝ սույն թվականի 1-ին կիսամյակում պետական բյուջեից նախատեսելով 5 875 709 դրամի ֆինանսավորում հետևյալ գործառույթների համար.

1. Ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ՝ 2 500 037 դրամի

1-ին կիսամյակում մշակվել և Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրենի հրամանով հաստատվել և գործողության մեջ է դրվել թվով 20 ազգային ստանդարտ:

2. Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում՝ 1 455 840 դրամի

2.1 Միջազգային (ԻՍՕ), եվրոպական (ԵՆ) և միջպետական (ԳՕՍՏ) ստանդարտների նախագծերի փորձաքննություն

2.2 Միջազգային և միջպետական ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկություն

2.3 ԱՊՀ երկրների ստանդարտացման միջպետական խորհրդի, ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ) և Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՍԵՆ) աշխատանքների կազմակերպում:

3. Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքներ՝ 1 919 832 դրամի

3.1. Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ֆոնդի համալրում և հաշվառում

3.2. Ընդունված ազգային ստանդարտների գրանցում

3.3. Հայաստանի Հանրապետությունում գործող ազգային ստանդարտների ֆոնդի վարում

3.4. Հայաստանի Հանրապետության կազմակերպությունների տեղեկատվական սպասարկում

3.5. «Ստանդարտ» տեղեկատվական-որոնման ավտոմատացման համակարգի ներդրում

3.6. Հայաստանի Հանրապետությունում գործող ստանդարտների ամբողջ տեքստի տվյալների բազայի (էլեկտրոնային տարբերակների) ստեղծում, հաշվառում և պահում

3.7. ԱՀԿ անդամ երկրների տեղեկատվական (հարցման) կենտրոններին համապատասխան հարցումների տրամադրում

3.8. Ազգային ստանդարտների կատալոգի, եռամսյակային տեղեկատուի նախապատրաստում և հրատարակում:

2012թ. 1-ին կիսամյակում մշակվել է միջազգային (ԻՍՕ) և Եվրոպական (ԵՆ) ստանդարտներին ներդաշնակ 76 ազգային ստանդարտներ, որոնցից 35-ը հաստատվել և գործողության մեջ են դրվել Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրենի հրամանով, 3-ը

գտնվում են տեխնիկական հանձնաժողովներում և աշխատանքային խմբերում՝ քննարկման փուլում, իսկ 38-ը՝ մշակման վերջնական փուլում:

1-ին կիսամյակում 2012թ. ստանդարտացման ծրագրով նախատեսված 91 ստանդարտներից մշակվել է 76 (83%) ազգային ստանդարտների նախագծեր:

Հաշվետու ժամանակաշրջանում ի կատարումն ՀՀ վարչապետի 2011 թ. դեկտեմբերի 1-ի «ՀՀ արդյունաբերության ընտրված ոլորտների օրենսդրությունը եվրամիության մակարդակում կանոնակարգվող արդյունաբերական ոլորտների օրենսդրությանը մոտարկման ծրագիրը հաստատելու մասին» N 1162-Ա որոշման ինստիտուտը ստեղծել է հետևյալ երեք ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները՝

- ՏՀ 18 «Իսաղալիքներ»,
- ՏՀ 19 «Էլեկտրամագնիսական համատեղելիության տեխնիկական միջոցներ»,
- ՏՀ 20 «Ցածր լարման էլեկտրասարքավորումներ»:

Նշված տեխնիկական հանձնաժողովների աշխատանքները պետք է ապահովեն միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտների մշակումը և արդյունավետ կիրառումը՝ ՀՀ-ում համապատասխան տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարումն ապահովելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանում ինստիտուտը ստեղծել է նաև «Համապատասխանության գնահատում և կառավարման համակարգեր» ՏՀ 21 ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովը, որը նույնական է ԻՍՕ միջազգային ստանդարտացման կազմակերպության «ԿԱՍԿՈ» և ԻՍՕ/ՏՀ 176 տեխնիկական կոմիտեներին: Ստեղծված հանձնաժողովի հիմնական նպատակն է նախապատրաստել և ազգային ստանդարտների կարգավիճակով ՀՀ-ում կիրառել համապատասխանության գնահատման և կառավարման համակարգերի ոլորտի միջազգային ստանդարտները:

2012 թվականի 1-ին կիսամյակում կազմակերպվել է ստանդարտացման հանձնաժողովների 11 նիստ և շահագրգիռ կողմերի աշխատանքային խմբերի 3 խորհրդակցություն:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել է միջազգային ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկության աշխատանքներ, որի ընթացքում 51 միջազգային ստանդարտների նախագծեր անցել են փորձաքննություն և համաձայնեցվել են ՀՀ-ում բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ: Կատարվել են վերլուծական աշխատանքներ նոր ընդունված ԻՍՕ և ԵՆ ստանդարտները ՀՀ-ում կիրառման վերաբերյալ:

Ինստիտուտը կազմակերպել է ՀՀ ընկերությունների մասնակցությունը ԻՍՕ-ի 21 ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի, 20 ենթահանձնաժողովի և 3 քաղաքականության մշակման հանձնաժողովի աշխատանքներին:

Ինստիտուտը ակտիվորեն մասնակցելով միջազգային և եվրոպական ստանդարտացման աշխատանքներին՝ ԻՍՕ-ի և ՍԵՆ-ի տեխնիկական հանձնաժողովների մակարդակով, նպատակ ունի խթանել ստանդարտացումը ՀՀ-ում և ստանդարտացման աշխատանքների զարգացման միջոցով տնտեսության ճյուղերում ստեղծել բարենպաստ պայմաններ հայրենական արտադրանքի արտահանման և շուկայում մրցունակության բարձրացման, ինչպես նաև անվտանգության ապահովման համար:

Հաշվետու ժամանակահատվածում ինստիտուտը կազմակերպել է միջպետական ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկության աշխատանքներ, որի ընթացքում

110 միջպետական ստանդարտների նախագծեր անցել են փորձաքննություն և համաձայնեցվել են ՀՀ-ում բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:

2012 թվականի 1-ին կիսամյակում Ստանդարտների ազգային ֆոնդը համալրվել է 734 միջազգային (ԻՍՕ), 490 Եվրոպական (ԵՆ), 28 միջպետական (ԳՕՍՍ), 385 Ռուսաստանի Դաշնության (ԳՕՍՍ Ռ) և 26 Հայաստանի Հանրապետության (ՀՍ) նոր ստանդարտներով: Ստանդարտների էլեկտրոնային տարբերակները արխիվացվել են, իսկ թղթի կրիչով ստանդարտները հաշվառման են վերցվել մատյանում:


Ստանդարտների ազգային ֆոնդի արդիականացման նպատակով 2012 թվականի 1-ին կիսամյակում կատարվել է 235 միավոր ստանդարտի տեխնիկական մշակում:

Ինստիտուտն իրականացրել է նաև ՀՀ-ում ընդունված և գործող ստանդարտների էլեկտրոնային տարբերակների ստեղծման և կայքում տեղադրման աշխատանքներ՝ ստանդարտների էլեկտրոնային վճարման համակարգի ներդրման նպատակով:

Կազմակերպվել է վճարովի ծառայություն՝ տեխնիկական պայմանների մշակման խորհրդատվություն, որի հիմնական նպատակն է օգնել միջին և փոքր ձեռնարկություններին և անհատ ձեռնարկատերերին մշակել կոնկրետ տեսակի արտադրանքի համար տեխնիկական պայմաններ՝ համաձայն գործող նորմատիվ իրավական փաստաթղթերի և ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտների պահանջներին:


Կատարվել են շուրջ 51 կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար խորհրդատվական աշխատանքներ: Նշված ծառայությունների գումարը կազմել է **1 802 հազ. դրամ**:

Գծանկար 1. Խորհրդատվական աշխատանքներից ստացված գումարային դինամիկան 2011 թ.-ի 1-ին կիսամյակի համեմատ, հազ. դրամ



2012թ. 1-ին կիսամյակում ինստիտուտն իրականացրել է 139 տեխնիկական պայմանների և 78 տեխնիկական պայմանների և դրանցում փոփոխությունների փորձաքննության աշխատանքներ՝ **6 900 հազ. դրամի**:

Գծանկար 2. Տեխնիկական պայմանների փորձաքննության աշխատանքներից ստացված գումարային դինամիկան 2011 թ.-ի 1-ին կիսամյակի համեմատ, հազ. դրամ



«Ստանդարտ» տեղեկատվական որոնման համակարգի արդիականացման նպատակով բաժնի կողմից համակարգչի միջոցով իրականացվել է ազգային ստանդարտների տվյալների բազայի մուտքագրում:

2012 թ-ի 1-ին կիսամյակում մուտքագրվել է էլեկտրոնային բազայում Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ դրված 40 ազգային ստանդարտների մատենագիտական տվյալները:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության գործառույթներին և մասնագետներին սպառիչ տեղեկատվություն ապահովելու համար նախապատրաստվել է հրատարակման համար «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» 2012 թ-ի N1 և N2 եռամսյակային տեղեկատու, ինչպես նաև N1, N2, N3 և N4 տեղեկատվական թերթիկները: Նախապատրաստվել է 2012թ. «ՀՀ ստանդարտների կատալոգ»-ը հրատարակման համար:

4. ՄԱՐՔԵՏԻՆԳԻ և ՎԱՃԱՌՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Սպասարկման նպատակով ինստիտուտը 2011 թվականի 1-ին կիսամյակում իրականացրել է 50 ՀՀ կազմակերպությունների համար տեղեկատվական բաժանորդային սպասարկում ստանդարտացման և համապատասխանության բնագավառում: Կնքվել է 25 կազմակերպությունների հետ պայմանագրեր՝ **4.400.0 հազ. դրամի**:

Աբոնենտային տեղեկատվական սպասարկման արդյունքում 1-ին կիսամյակում կազմվել է 22 ակտ՝ **3.120.0 հազ. դրամի**, հետևյալ կատարված աշխատանքների մասին.


- տեղեկատվության տրամադրում ազգային ֆոնդում միջազգային (ԻՍՕ, ԻԷԿ, ԵՆ), միջպետական (ԳՕՍՍ), Հայաստանի Հանրապետության (ՀՍ) և արտասահմանյան երկրների (այդ թվում ԱՊՀ) ստանդարտների և այլ նորմատիվ փաստաթղթերի մասին,
- կազմակերպությունների ստանդարտների ֆոնդի արդիականացում,
- ՀՀ ստանդարտների ամենամյա կատալոգի, ստանդարտների և տեխնիկական պայմանների եռամսյակային տեղեկատուների տրամադրում,
- աբոնենտին անհրաժեշտ ազգային ստանդարտների անվճար տրամադրում (թվով 20),

- խորհրդատվություն ստանդարտացման և համապատասխանության հավաստման փաստաթղթերի վերաբերյալ:

Իրականացվել է նաև տեղեկատվական սպասարկում ՀՀ պետական կառավարման մարմիններին, բոլոր կազմակերպություններին, ֆիզիկական անձանց և ստանդարտների ազգային ինստիտուտի ստորաբաժանումների համար: Նշված աշխատանքները իրականացվել են պետպատվերի շրջանակներում:

2012թ. 1-ին կիսամյակում ինստիտուտն իրականացրել է ստանդարտների վաճառք ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին՝ 107 ստանդարտ՝ 641 650 դրամի:

Գծանկար 3 - ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի գումարային դինամիկան 2011 թ.-ի 1-ին կիսամյակի համեմատ, հազ. դրամ



Հաշվետու ժամանակաշրջանում Ստանդարտների ազգային ինստիտուտի կայքում տեղադրվել է ստանդարտների էլեկտրոնային վաճառքի համակարգը, որը հնարավորություն է տալիս վճարել և անմիջապես ձեռք բերել ՀՀ-ում գործող ազգային ստանդարտը՝ էլեկտրոնային և թղթային կրիչներով: Կայքի համակարգին համապատասխանեցվել և ներբեռնվել է շուրջ 3700 ստանդարտ:

5. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ

Ինստիտուտում գործում են 6 հավատարմագրված փորձարկման լաբորատորիա:

Երևանի փորձակման լաբորատորիայում 1-ին կիսամյակում ընդունվել է 525 հայտ և տրվել է 525 փորձարկման արձանագրություն: 2011 թ. 1-ին կիսամյակում ընդունվել է 558 հայտ և տրվել է 558 փորձարկման արձանագրություն:

Երևանի նավթամթերքի փորձակման լաբորատորիայում 1-ին կիսամյակում ընդունվել է 305 հայտ և տրվել է 305 փորձարկման արձանագրություն: 2011 թ. 1-ին կիսամյակում ընդունվել է 363 հայտ և տրվել է 363 փորձարկման արձանագրություն:

Ֆիզիկաքիմիական փորձակման լաբորատորիայում 1-ին կիսամյակում ընդունվել է 37 հայտ և տրվել է 37 փորձարկման արձանագրություն: 2011 թ. 1-ին կիսամյակում ընդունվել է 94 հայտ և տրվել է 94 փորձարկման արձանագրություն:

Ռադիոէլեկտրական սարքավորումների փորձակման լաբորատորիայում 1-ին կիսամյակում ընդունվել է 68 հայտ և տրվել է 68 փորձարկման արձանագրություն: 2011 թ. 1-ին կիսամյակում ընդունվել է 78 հայտ և տրվել է 78 փորձարկման արձանագրություն:

Գյումրու փորձարկման լաբորատորիայում 1-ին կիսամյակում ընդունվել է 360 հայտ և տրվել է 360 փորձարկման արձանագրություն: 2011 թ. 1-ին կիսամյակում ընդունվել է 315 հայտ և տրվել է 315 փորձարկման արձանագրություն:


Վանաձորի փորձարկման լաբորատորիայում 1-ին կիսամյակում ընդունվել է 122 հայտ և տրվել է 149 փորձարկման արձանագրություն: 2011 թ. 1-ին կիսամյակում ընդունվել է 161 հայտ և տրվել է 175 փորձարկման արձանագրություն:

2012 թ. 1-ին կիսամյակում կատարվել է 1417 փորձարկում:

ՓԼ-ների առջև խնդիր է դրված տանել աշխատանքներ փորձարկման ծավալների ավելացման ուղղությամբ: Այդուհանդերձ, ներկայումս նկատվում է փորձարկման ծավալների անկում՝ կապված սերտիֆիկացման ծավալների նվազման հետ:

Առկա խնդիրներից է ստանդարտ և քիմիապես գերմաքուր նյութերի ձեռքբերման հարցը:

Գծանկար 4 - Ինստիտուտի հավատարմագրված լաբորատորիաներում կատարված փորձարկումների քանակական դինամիկան 2011 թ.-ի 1-ին կիսամյակի համեմատ




6. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կազմում հավատարմագրված սննդամթերքի և պարենային հումքի, ոչ պարենային ապրանքների, ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինները շարունակել են իրականացնել համապատասխանության հավաստման աշխատանքներ: Ինստիտուտի սերտիֆիկացման մարմինների գործունեության ծավալներն ամենախոշորն են հանրապետությունում՝ համեմատած մյուս մարմինների գործունեությանը: Այսպես, 1-ին կիսամյակում տրվել են՝

- ա) ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սերտիֆիկացման գծով տրվել են՝ 580 համապատասխանության սերտիֆիկատ, 369 համապատասխանության հայտարարագիր, Համապատասխանության հսկողություն է իրականացվել 52 կազմակերպություններում 82 ծառայությունների սերտիֆիկատ

բ) սննդամթերքի և պարենային հումքի գծով տրվել են՝
 525 համապատասխանության սերտիֆիկատ,
 358 համապատասխանության հայտարարագիր
 Ընդունվել է 3 դադարեցման և կասեցման որոշումներ
 Իրականացվել է 10 համապատասխանության հսկողություն

Գծանկար 5 - Ինստիտուտի սերտիֆիկացման մարմինների կողմից տրված սերտիֆիկատների քանակական դինամիկան 2011թ.-ի 1-ին կիսամյակի համեմատ



7. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ

1-ին կիսամյակում ընդունել է որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացման 13 հայտ և 13 կազմակերպությունում իրականացրել է կառավարման համակարգերի համապատասխանության հսկողություն:

Իրացվում են աշխատանքներ կազմակերպություններին կառավարման համակարգերի սերտիֆիկացման վերաբերյալ իրազեկման ուղղությամբ:

8. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաշվետու կիսամյակում ՀՀ 19 կազմակերպությունից ստացված նամակների և հայտերի համաձայն՝ 102 հայտատուից ձևավորվել է ունկնդիրների 15 և նախադիպլոմային ու արտադրական պրակտիկա անցկացնող բուհերի ուսանողների 2 խումբ: Սահմանված կարգով կազմակերպվել են ընդհանուր, ներաձական, մասնագիտական դասընթացներ: Ունկնդիրներին տրամադրվել են ուսուցողական-մեթոդական և տեղեկատվական նյութերի փաթեթներ: Դասընթացներն անցկացվել են արդիական ինտերակտիվ մեթոդներով ու միջոցներով (սլայդների ցուցադրում, թեսթեր, գործնական խաղեր, գործնական առաջադրանքներ, տարբեր իրավիճակների վերլուծություններ, խաչաձև հարցումներ, օուլեդային գրոհներ և այլ): Ուսուցումը գնահատվել է թեստավորումների կամ քննությունների միջոցով,

որոնց արդյունքներով ունկնդիրներին հանձնվել են վկայականներ, սահմանված կարգով գրանցելով գրանցամատյանում:

Առաջնորդվելով ուղղվածություն դեպի ունկնդիրները սկզբունքով, հաշվի առնելով ունկնդիրների պահանջարկը, կազմակերպվել և գործարկվել են նոր բնույթի՝ **անհատական դասընթացներ**, որոնք արդյունավետության առումով ըստ արժանվույն գնահատվել են մասնակիցների կողմից:

Սահմանված կարգով և հաղորդակցության տարբեր միջոցներով ապահովվել է կապը և հաղորդակցությունը ՀՀ կազմակերպությունների հետ, որոնք պարբերաբար իրազեկվել են Կենտրոնում անցկացվող դասընթացների և միջոցառումների մասին, ըստ անհրաժեշտության՝ կազմակերպվել է խորհրդատվություն: Հայտատուների շրջանում կատարված հարցումներից և պահանջարկից ելնելով մշակվել են 10 նոր դասընթացի ուսումնական և թեմատիկ պլաններ, որոնք ներառվել են մասնագետների վերապատրաստման դասընթացների ցանկում:

Կարևորելով «Ստանդարտացում, տեխնիկական կանոնակարգում, չափումների միասնականության ապահովում, համապատասխանության գնահատում, կառավարման համակարգերի հիմնադրույթներ» ընդհանուր դասընթացը, որպես համընդգրկուն դասընթաց ներկայացվող ոլորտների և բովանդակային առումով, հաշվի առնելով նշված ոլորտները կանոնակարգող ՀՀ նոր օրենքների գործարկումը, ինչպես նաև դրանց կիրառման վերաբերյալ մեկնաբանությունների և լուսաբանումների անհրաժեշտությունը ու հրատապությունը, մշակվել և հաստատման է ներկայացվել վերը նշված դասընթացի թեմատիկ և ուսումնական պլանը, տրամադրվող ուսումնամեթոդական փաստաթղթերի փաթեթը:

Իր առաջնահերթություններին դասելով ՀՀ բուհերի հետ կապը և համագործակցությունը, հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնն իրականացրել է Երևանի պետական, Հայաստանի պետական տնտեսագիտական, Հայաստանի պետական ագրարային և Գավառի պետական համալսարանների համապատասխան ֆակուլտետների դասախոսների և ուսանողների իրազեկում Կենտրոնի ծրագրերին և նախաձեռնություններին, ինչպես նաև ինստիտուտի բազայի վրա ուսանողների արտադրական պրակտիկաների կազմակերպում:

2012թ-ի գործունեության ծրագրի համաձայն Կենտրոնի ղեկավարի և թերեյների կողմից անցկացվել են տեղեկատվական և իրազեկման սեմինարներ Հայաստանի պետական ագրարային համալսարանի պարենամթերքի տեխնոլոգիաների ուղղությամբ մասնագիտացող ուսանողների և դասախոսների համար՝ նվիրված որակի, էկոլոգիական և սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի միջազգային ստանդարտների պահանջների ներկայացմանը և ՀՀ-ում դրանց կիրառման հեռանկարներին:

Կապված նոր օրենսդրության գործարկման հետ առաջացել է խնդիր. գործողությունից հանվել է «Համապատասխանության գնահատման բնագավառում մասնագետներին որպես փորձագետներ որակավորման» ընթացակարգը: Աշխատանքներ են տարվում այս ոլորտում փորձագետների որակավորման նոր կարգ մշակելու ուղղությամբ:

Կենտրոնի 2012թ-ի 1-ին կիսամյակի գործունեության համադրումը 2011թ-ի նույն ժամանակահատվածի հետ թույլ է տալիս փաստելու հետևյալը:

Պահպանվել է Կենտրոնի ծառայություններից օգտվող ունկնդիրների և ձևավորված խմբերի թիվը: Այս փաստը Կենտրոնի գործունեության կայունության և պահանջված լինելու ցուցանիշ է:

Պահպանվել է ուսուցումից ունկնդիրների բավարարվածության ցուցանիշը՝ 100 %: Այս արձանագրումը հավաստում է Կենտրոնում բոլոր գործընթացների պատշաճ մակարդակով իրականացման մասին:

Կենտրոնում առկա են հետևյալ խնդիրները.

Կենտրոնի անձնակազմի համալրում մասնագետ թրեյներներով, որոնք պետք է տիրապետեն թրեյնինգների միջազգայնորեն ընդունված գործիքներին, մեթոդներին, կանոններին,

ունկնդիրների առաջարկների և գնահատականների հիման վրա թրեյնինգների ուսումնամեթոդական բազայի շարունակական բարելավում,

ՀՀ բուհերի հետ աշխատանքների ակտիվացում, նպաստելով մրցունակ մասնագետների ձևավորմանը,

ՀՀ սննդարտադրողների հետ աշխատանքների ակտիվացում, հատկապես նրանց ներգրավում ՀՀ-ում պարտադիր դարձած HACCP համակարգի պահանջների ուսուցմանը, այս կերպ օժանդակելով համակարգի ներդրման գործընթացներին: